

Ձեռնարկությունների Եվրոպական Ցանց Հայաստան



ՏԵՂԵԿԱԹԵՐԹ #9

Սեպտեմբեր 2017

Երևան, Հայաստան



Բովանդակություն

Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ.....	3
Մանրի վերամշակում	3
Տեքստիլ արտադրություն	6
Շինարարություն	9
R&D	11
Տեղեկատվական տեխնոլոգիաներ	13
Կոսմետիկա	15
Դեղագործություն	16
Այլ ոլորտներ	18
Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ.	20
Եվրոպական նորություններ և միջոցառումներ.....	22
Տեղական նորություններ և միջոցառումներ	24

Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ

Հայաստանյան ՓՄՁ-երի միջազգային գործարարության զարգացման և արտասահմանյան գործընկերների հետ կապեր հաստատելու նպատակով ՁԵՑ Հայաստանը ուշադրության է ներկայացնում գործարար համագործակցության հետևյալ առաջարկները.

Մենդի վերամշակում



Գործարար համագործակցության առաջարկներ

Լեհական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ

Լեհական ընկերությունը, որը վաճառում և տարածում է համեմունքներ, չորացրած բանջարեղեն, խոտաբույսեր, մսամթերքի և նրբերշիկների համար նախատեսված համեմունքներ, փնտրում է դիստրիբյուտորներ:

Ծածկագիր. [BOPL20170831004](#)

Իսպանական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ և գործակալներ

Իսպանական ընտանեկան հեղինակավոր ընկերությունը, որը զբաղվում է բարձրորակ ընկուզեղենի, նուշի, պնդուկի արտադրությամբ՝ պատրաստված յուրահատուկ տեխնոլոգիայով, տապակված իրենց եգակի փայտե վառարանով՝ ձիթապտղի յուղով կամ շաքարավազով: Ընկերությունը ցանկանում է համագործակցել դիստրիբյուտորների և գործակալների հետ իր արտադրանքը տարբեր երկրներում տարածելու նպատակով:

Ծածկագիր. [BOES20160217001](#)

Ռուսական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ արտասահմանում

Ռուսական ընկերությունը Կրասնոյարսկի շրջանից, որը մասնագիտացած է բնական խմելու ջրի արտադրությամբ, փնտրում է դիստրիբյուտորներ՝ համաձայնագիր կնքելու նպատակով:

Ծածկագիր. BORU20160404002

Ուկրաինական արտադրողը փնտրում է ներկրողներ և դիստրիբյուտորներ

Ուկրաինական ընկերությունն առաջարկում է պրեմիում դասի բնական քաղցրավենիք, մասնավորապես՝ ձեռագործ շոկոլադե սալիկներ, մրգերով շոկոլադներ և այլն: Ընկերությունը մասնագիտացած է միայն բնական բաղադրիչների օգտագործման մեջ, առանց կակաոյի յուղի, արհեստական ներկերի և կոնսերվանտների փոխարինիչներ օգտագործելու: Նրանք մտադիր են ընդլայնել արտահանումը և փնտրում են նոր ներմուծողներ, դիստրիբյուտորներ և մանրածախ առևտրով զբաղվող ընկերություններ եվրոպական և այլ շուկաներում տարածման համաձայնագրեր կնքելու համար:

Ծածկագիր. BOUA20170313001

Գործարար համագործակցության հարցումներ

Իսպանական ընկերությունը փնտրում է արտադրողներ

Իսպանական ընկերությունը, որը մասնագիտացած է ոչ ալերգիկ սննդամթերքի և խմիչքների տարածմամբ և խթանմամբ, փնտրում է արտադրողներ, ովքեր ցանականում են իրենց արտադրանքը ներկայացնել շուկայում: Ընկերությունը փնտրում է գործընկերներ գովազդման ծառայությունների մատուցման ոլորտում՝ շուկայի և հարցումներ հետ կապված: Ընկերությունն առաջարկում է ալերգիա ունեցող սպառողների մշակված ցանկ և փնտրում է նրանց համար սննդի ու խմիչքի լուծումներ առաջարկողներ:

Ծածկագիր. BRES20151014001

Իսպանական ընկերությունն առաջարկում է իր տարածման ծառայությունները

Իսպանական ընկերությունը հետաքրքրված է սառեցված հրուշակեղենի արտադրությամբ զբաղվող ընկերությունների հետ տարածման համագործակցությամբ և փնտրում է մատակարարներ այլ երկրներից:

Ծածկագիր. BRES20170322001

Լեհական ընկերությունը փնտրում է մատակարարներ

Լեհական մասնավոր միջազգային առևտրային ընկերությունը փնտրում է պահածոյացված, սառեցված, չորացրած մրգերի ու բանջարեղենի մատակարարներ: Ընկերությունը փնտրում է անմիջական արտադրողներ, ովքեր կցանկանան համագործակցել տարածման ծառայությունների մատուցման շրջանակներում:

Ծածկագիր. BRPL20170220002

Հոլանդական կրեատիվ ընկերությունը փնտրում է փոքր ավանդական հրուշակեղեն արտադրողներ և առաջարկում է արտադրական պայմանագրեր:

Հոլանդական ՓՄՁ-ն մշակել է գինու մածուկ, որը հիմնված է գինու քաղվածքների վրա՝ բացառապես հրուշակեղենի շուկայի համար: Ընկերությունը շահագրգռված է պոտենցիալ գործընկերներ գտնելու ուղղությամբ, ովքեր կարող են արտադրել փոքրիկ խմբաքանակներ (20-400 կիլոգրամ) բարձրորակ գինու մածուկներ: Հոլանդական ընկերությունը պատրաստ է բանակցել տարբեր արտադրական պայմանագրերի կնքման ուղղությամբ:

Ծածկագիր. BRNL20161209001

Տեքստիլ արտադրություն



Գործարար համագործակցության առաջարկներ

Խորվաթական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ

Խորվաթական ընկերությունը, որը մասնագիտացած է տեքստիլե թափոնների մշակման և վերամշակման ու դրանցից պատրաստի տեքստիլի, կտորի և գործվածքների մշակման մեջ, փնտրում է դիստրիբյուտորներ, ովքեր արտադրանքը կտարածեն վերջնական սպառողին: Ակնկալվում է կնքել արտադրանքի տարածման համաձայնագիր:

Ծածկագիր. BOHR20170609003

Ուկրաինական տեքստիլ արտադրողն առաջարկում է իր ծառայությունները ենթակապալառուի կամ արտադրանքի տարածման պայմանագրի շրջանակներում:

Ուկրաինական ընկերությունը, որը մասնագիտացած է հագուստի, համազգեստի և կենցաղային տեքստիլի արտադրության ոլորտում, փնտրում է միջազգային համագործակցություն ենթակապալառուի կամ արտադրանքի տարածման պայմանագրի շրջանակներում:

Ծածկագիր. BOUA20170116001

Մեծ Բրիտանիայում գործող ընկերությունն առաջարկում է լիցենզիայի պայմանագիր

Բրիտանական ընկերությունը մշակել է տեքստիլի համար նախատեսված եզակի ոչ-թունավոր սուպեր հիդրոֆոբիկ ծածկույթ, որը շնչող է և պահպանում է գործվածքի կառուցվածքը: Նրանք փնտրում են առողջապահության ոլորտի և այլ նմանատիպ շուկաների մատակարարողներ՝ իրենց լուծումները տեքստիլ արտադրողներին առաջարկելու համար՝ լիցենզիայի պայմանագրի շրջանակներում:

Ծածկագիր. BOUK20170818006

Լեհական ընկերությունը փնտրում է գործընկերներ արտասահմանում

Լեհական ընկերությունը հանդիսանում է բազմատեսակ յուրահատուկ ձեռագործ տեքստիլե իրեր և զարդեր արտադրող: Վաճառքն իրականացվում է մանրածախ և մեծածախ քանակով ու հնարավորություն է տալիս գործընկերներին ձեռք բերել անհրաժեշտ բոլոր նյութերը և արքեսուարները մեկ տեղում: Ընկերությունն առաջարկում է արտադրական ծառայություններ, լիցենզիայի պայմանագիր, ինչպես նաև փնտրում է դիստրիբյուտորներ:

Ծածկագիր. BOPL20170724002

Հատուկ արտադրական պրոցեսի համար առաջարկվող ծալքերի և հյուսվածքների իրականացում

Գերմանական ընկերությունը զբաղվում է տեխնիկական տեքստիլի մշակմամբ: Ընկերությունը մասնագիտացած է հյուսված և ծալքավոր տեքստիլի թելերի արտադրությամբ: Նորարական արտադրանքը կիսաֆաբրիկատ վիճակում է գտնվում, և ընկերությունն առաջարկում է իր փորձն ու գիտելիքները անհատական արտադրանքի ստեղծման և մշակման համար: Քաշը, կառուցվածքը, տարողունակությունը և թելի այլ առանձնահատկությունները հանդիսանում են ընկերության առանցքային կարողությունները: Ընկերությունը ցանկանում է կնքել արտադրական պայմանագիր՝ լրացուցիչ հետազոտական գործունեությամբ:

Ծածկագիր. BODE20161104001

Իտալական ընկերությունը, որը առաջարկում է տեքստիլի թվային տպագրական լուծումներ, փնտրում է դիստրիբյուտորներ

Իտալական ընկերությունը, որը գործում է տեքստիլի թվային տպագրական լուծումների ոլորտում և արտադրում է արդյունաբերական տպիչներ և պլոտտերներ, փնտրում է առևտրային գործընկեր, ով կարող է հանդես գալ որպես դիստրիբյուտոր և ամրապնդել ընկերության դիրքերը Եվրոպական շուկայում:

Ծածկագիր. BOIT20161221006

Գործարար համագործակցության հարցումներ

Ֆրանսիական ընկերությունը փնտրում է տեքստիլ արտադրողներ

Ֆրանսիական ընկերությունը մասնագիտացած է 0-9 տարեկան երեխաների համար նախատեսված GOTS (Համաշխարհային օրգանական տեքստիլ ստանդարտ) նորածն հագուստի և արքեսուարների նախագծմամբ: Նրանք փնտրում են գործընկերներ, ովքեր պատրաստ կլինեն իրենց նախագծած արտադրանքը կյանքի կոչել: Ակնկալվում է

ատթորախինգային և արտադրական պայմանագրեր կնքել: Գործընկերը պետք է տեքստիլի արտադրության ոլորտում փորձ ունենա և աշխատի GOTS-ով (Համաշխարհային օրգանական տեքստիլ ստանդարտ):

Ծածկագիր. BRFR20161028001

Գերմանական կորպորատիվ հագուստի մատակարարը փնտրում է արտադրող

Գերմանիայում գործող կանանց և տղամարդկանց համար անհատական բարձրորակ աշխատանքային հագուստի մատակարարը փնտրում է ընկերություն, ով կարող է արտադրել վերնաշապիկներ, բլուզներ և պոլո- վերնաշապիկներ: Քանի որ կորպորատիվ հաճախորդների մեծ մասը պատվիրում է հագուստն անհատական լոգոներով կամ սկզբնատառերով, գերմանական ՓՄՁ-ն փնտրում է արտադրական պայմանագիր այնպիսի ընկերությունների հետ, որոնք կարող են իրականացնել ասեղնագործություն և տպագրություն որպես լրացուցիչ աշխատանքային քայլ:

Ծածկագիր. BRDE20170619001



Գործարար համագործակցության առաջարկներ

Շամանակակից շինարարական կառույցներ՝ պատրաստված ստանձված, լամինացված փայտանյութից

Լեհաստանի հյուսիս-արևմուտքում տեղակայված ընկերությունն առաջարկում է HBE (տան բազային շահագործման) համակարգ՝ լամինացված փայտանյութից՝ պատրաստված զանգվածային փայտե կառույցների համար: Նրանք առաջարկում են որակյալ համալիր ծառայություններ՝ դիզայնից մինչև արտադրություն և առաքումից՝ մոնտաժ: Արտադրողն առաջարկում է իր ծառայությունները շինարարական ընկերություններին որպես ենթակապալառու:

Ծածկագիր. BOPL20160217003

Ռուսական արտադրողը փնտրում է առևտրի գործակալներ արտասահմանում

Ռուսական ընկերությունը, որը մասնագիտացած է մետաղով լցված պլաստիկե և ապակե կառուցվածքների արտադրության մեջ, փնտրում է գործընկերներ առևտրային գործակալության համաձայնագրի շրջանակներում համագործակցելու նպատակով:

Ծածկագիր. BORU20170809002

Իսպանական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորների և ենթակապալառուի

Իսպանական ընկերությունը, որն արտադրում է նորարարական շինարարական հերմետիկ թրծակավի և կերամիկական օդափոխվող ճակատների համակարգեր, փնտրում է դիստրիբյուտորներ և ցանկանում է ընդլայնել իր գործունեությունը՝ կնքելով ենթակապալառուի պայմանագիր այն ընկերությունների հետ, ովքեր ներգրավված են շինարարական ոլորտում:

Ծածկագիր. BOES20170718002

Ռուսական արտադրական ընկերությունը փնտրում է առևտրային գործակալներ և դիստրիբյուտորներ արտասահմանում

Էլեկտրաքիմիական պաշտպանության սարքավորումների ռուսական արտադրողը փնտրում է գործընկերներ առևտրային գործակալության և արտադրանքի տարածման ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքման շրջանակներում:

Ծածկագիր. BORU20170809003

Ռուսական արտադրական ընկերությունը փնտրում է գործընկերներ

Ռուսական ընկերությունը, որը մասնագիտացած է օդափոխման ֆասադների տեղադրման, նախագծային լուծումների մշակման, արտադրության պատրաստման և փաթեթավորման, շինարարական աշխատանքների կատարման գործում, փնտրում է գործընկերներ համագործակցելու ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակներում:

Ծածկագիր. BORU20170809008

Լեհական ընկերությունը փնտրում է առևտրային գործակալներ

Հարավարևելյան Լեհաստանում գտնվող ընկերությունը առաջարկում է 100% կավ պարունակող կավե սվադներ և բնութագրվում է ինտերիերի միկրոկլիմայի հետ կապված բարձր պարամետրերով: Ընկերությունը փնտրում է դիզայներների և նախագծային գործակալություններ առևտրային ծառայության պայմանագիր մատուցման շրջանակներում համագործակցելու համար, որոնք մասնագիտացած են կանաչապատ շինարարական նյութերի հետ աշխատելու և կայուն շինարարական նախագծեր իրականացնելու գործում:

Ծածկագիր. BOPL20170727001

Գործարար համագործակցության հարցումներ

Ռումինական մեծածախ առևտուր իրականացնող ընկերությունը փնտրում է արտադրող

Ռումինական ընկերությունը ինտերիերի դիզայնի և սանիտարական սարքավորումների ոլորտում տարբեր արտադրատեսակների փորձառու մանրածախ առևտուր իրականացնող ընկերություն է: Իր արտադրանքը ընդլայնելու նպատակով ընկերությունը փնտրում է արտադրողներ, որոնք զբաղվում են նմանատիպ գործունեությամբ՝ նրանց հետ արտադրական պայմանագիր կնքելու համար:

Ծածկագիր. BRRO20170725001

***Չեխական երկաթե ու պողպատե նյութերի մեծածախ վաճառքով զբաղվող ընկերությունը
փնտրում է նոր մատակարարներ***

Չեխական ընկերությունը, որը մասնագիտացած է երկաթե ու պողպատե նյութերի առևտրով, առաջարկում է հանդես գալ որպես դիստրիբյուտոր նոր օտարերկրյա մատակարարների համար: Ընկերությունը փնտրում է երկաթե ու պողպատե իրերի լայն տեսականի, որոնք կարող են օգտագործվել տարբեր ոլորտներում՝ շինարարության, մեքենայագործության, էներգետիկ, քիմիական և սննդի արդյունաբերության ու մեքենաշինության ոլորտներում:

Ծածկագիր. BRCZ20160128001

R&D



EUROSTARS. Գրաֆեն տեխնոլոգիաների հիման վրա էներգախնայողության բարձր արդյունավետության համակարգեր մշակող ընկերություններ

EUROSTARS. Իսպանական ՓՄՁ-ն, որն աշխատում է գրաֆեն տեխնոլոգիաների ոլորտում, պատրաստում է Eurostars ծրագիր, որի նպատակն է մշակել գրաֆեն պարունակող ձկուն անոթներ և կաթոռներ: Այսպիսով, բարելավվում են մեխանիկական հատկությունները և իոնային շարժունակությունը: Ընկերությունը փնտրում է էլեկտրոքիմիայի և էներգախնայողության համակարգերի զարգացման ոլորտում փորձ ունեցող գործընկերներ:

Ծածկագիր. RDES20170803001

Արհեստական նեյրոնային ցանցի վրա հիմնված ծրագրային ապահովման մշակում՝ նոր տեխնոլոգիաների բիզնես առաջարկի համար

Կորեական ՓՄՁ-ն մասնագիտացված է բիզնես խորհրդատվության ծրագրային ապահովման մշակման գործում, հատկապես տեխնոլոգիաների փոխանցման, առևտրայնացման և բիզնեսի ինկուբացիայի ոլորտում, փնտրում է R & D ծրագրի գործընկեր: Ընկերությունը նպատակ ունի զարգացնել ծրագրային ապահովման համակարգ, որը կաշակցի ձեռնարկություններին, որոնք

փնտրում են առցանց տեխնոլոգիական աշխատաշուկայում նոր բիզնես տարրեր: Ակնկալվում է, որ գործընկերը ունենա բիզնես խորհրդատվական գործիքի և համակարգային ինտեգրացիայի փորձի վրա հիմնված:

Ծածկագիր. RDKR20170823002

EUROSTARS: Նորարարական արդյունավետ հորիզոնական ռեակցիայի տուրբիններով հիդրոէլեկտրակայանի նախագծման և զարգացման համար տեխնոլոգիական գործընկերներ

Իսպանական ՓՄՁ-ն պատրաստվում է Eurostars նախագծին՝ արդյունավետ և նորարար հորիզոնական ռեակցիայով տուրբինով նոր սերնդի հիդրոէլեկտրակայանի մշակման, արտադրության և առևտրայնացման համար, որը կարող է աշխատել դանդաղ և մեծ արագություն ունեցող գետերում: Տուրբինը նախատեսված է լինել կոմպակտ, հեշտ տեղադրվող և արդյունավետ: Ընկերությունը փնտրում է տեխնոլոգիական գործընկերներ հորիզոնական սիմետրիկ կնքված գեներատորի և բարդ երկրաչափական խողովակների մշակման համար:

Ծածկագիր. RDES20170803003

EUREKA 2017 ծրագրի համար հետազոտական գործընկերների որոնում: Տան վերահսկողության համար սմարթ տան տեխնոլոգիայի ինտեգրատոր՝ խոսքից-խոսք բնական լեզվով ինտերֆեյսի բջջային հավելվածի միջոցով:

Ռումինական ընկերությունը, որն ունի լավ աշխատանքային փորձ կողերի օպտիմալացման, պատկերի և խոսքի գործընթացային տեխնոլոգիայի ոլորտում, փնտրում է գործընկեր Eureka Program-ի շրջանակներում՝ համագործակցելու նպատակով: Ծրագրի գաղափարն է ստեղծել բջջային սարքերի ծրագրային հարթակ՝ շենքի վերահսկողության և հաղորդակցության համար: Ընկերությունն ունի նախկինում ԵՄ մրցույթներին և Eureka ծրագրին դիմելու փորձ:

Ծածկագիր. RDRO20170131001

EUREKA: Էլեկտրականություն արտադրելու համար նոր արևային սարքավորման մշակում

Կորեական ՓՄՁ-ն ունի էլեկտրականություն արտադրելու համար մշակված տեղադրման ենթահամակարգ: Ենթա-մոդուլը օգտագործում է արևային էներգիան և էլեկտրաէներգիայի արտադրման սարքավորումները՝ կիրառելով շինության մեծ տարածքները. պատերը և ապրանքները: Այս տեխնոլոգիայով նրանք կարող են հաղթահարել պատկերը, երանգները և ջերմաստիճանը: Նրանք ցանկանում են զարգացնել ենթահամակարգը եվրոպական փորձով՝ բջջային և ենթահամակարգի ոլորտում:

Ծածկագիր. RDKR20170726001



Գործարար համագործակցության առաջարկներ

Մեծ Բրիտանիայում գործող ՏՏ-ի կառավարմամբ զբաղվող ՓՄՁ-ն առաջարկում է անվտանգ տվյալների հեռացման ծառայություններ

Մեծ Բրիտանիայի ՓՄՁ-ն, որն ունի փորձառություն ՏՏ-ի անվտանգ շահագործման և տնօրինման ոլորտում, առաջարկում է տվյալների անվտանգ հեռացման ծառայություններ: ՓՄՁ-ն կաշխատի այն ընկերությունների, գիտահետազոտական հաստատությունների և համալսարանների հետ, որոնք ունեն ՏՏ ակտիվներ, որոնց գաղտնի տվյալներ, պետք է հանվեն մինչև ջնջելը կամ վերամշակումը: Ակնկալվում է համագործակցությունն իրականացնել աութսորսինգային, ծառայությունների մատուցման կամ ենթակապալառուի պայմանագրերի միջոցով:

Ծածկագիր. [BOUK20170907001](#)

Իսպանական ընկերությունը ցանկանում է կնքել առևտրային գործակալի պայմանագիր

Այս իսպանական ինժեներական ընկերությունը մասնագիտացած է զարգացած ՏՏ լուծումների (SaaS ռեժիմում աշխատասեղան և ամպային միջավայր) զարգացմամբ: Ընկերության կողմից առաջարկվող այս ՏՏ լուծումները հասցեագրված են կառավարման, խնայողական հաշվապահական և խնայողական արտադրության համար, ճիշտ որոշումներ կայացնելու, ծախսերի և գործողությունների վերաբերյալ տեղեկատվության վերլուծության համար:

Ծածկագիր. [BOES20161025004](#)

Գերմանական ՏՏ ընկերությունը ցանկանում է համագործակցել

Գերմանական այս ընկերությունը մասնագիտացած է տեղեկատվական տեխնոլոգիաների

խորհրդատվական և ծրագրային լուծումների ոլորտում ու մշակել է յուրօրինակ և հարմարավետ հարթակ՝ թվային կերպով աջակցելու և կառավարելու տարբեր բիզնես գործընթացները: Ընկերությունը նաև մշակել է ինտերակտիվ և արդյունավետ ուսուցման գործիք՝ ընկերության գործունեության համար անհրաժեշտ հիմնարար հմտությունների ուսուցման նպատակով: Ընկերությունը փնտրում է գործընկերներ ծառայությունների մատուցման ինչպես նաև Եվրոպայում համատեղ ձեռնարկության գործընկերներ՝ հարթակի վրա հիմնված SS լուծումներ մշակելու համար:

Ծածկագիր. BODE20170825001

Գործարար համագործակցության հարցումներ

Ուկրաինական SS ծառայություններ մատուցողը փնտրում է միջազգային գործընկերներ

Մասնագիտացված ուկրաինական ցանցային ինտեգրատորը փնտրում է միջազգային գործընկերներ, SS ծառայություններ մատուցող միջազգային կազմակերպություններ կամ այլ S2S ընկերություններ՝ Ուկրաինայում որպես պրոֆեսիոնալ կապալառու համագործակցելու համար:

Ծածկագիր. BRUA20170807001



Գործարար համագործակցության առաջարկներ

Լեհական ընկերությունն արտասահմանյան գործընկերներին առաջարկում է արտադրական կամ ծառայությունների մատուցման համաձայնագիր

Լեհական ընկերությունը, որը գործում է շուկայում 2015 թվականից, հանդիսանում է բնական կոսմետիկայի արտադրող: Այն մասնագիտացված է միայն կոսմետիկայի արտադրության ոլորտում՝ հիմնվելով միայն բնական բաղադրիչների վրա, առանց ֆիքսատորների, կոնսերվանտների կամ պարաբենների: Կոսմետիկայի համար օգտագործվող բոլոր բաղադրիչները բնական են: Արտադրողը ցանկանում է համագործակցություն հաստատել ծառայությունների մատուցման պայմանագրի հիման վրա անհատական բաղադրիչի բաղադրատոմսի ստեղծման և / կամ կոսմետիկայի արտադրության համաձայնագիր կնքելու համար:

Ծածկագիր. BOPL20170911001

Լեհական արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ

Լեհական գունավոր կոսմետիկա արտադրողը (ներառյալ շրթներկ, շրթունքների փայլեր, մարմնի խնամք, փայլեր, շրթներկներ, դիմակներ, եղունգների լաք, աչքի ստվերներ, աչքի խառնուրդներ, դեմքի փոշիներ և այլն) և մաշկի խնամք (ներառյալ, եղունգների խնամքի կոսմետիկա, քսուքներ, լոսյոններ, փրփրոցներ, եղունգների լաքահանող միջոցներ, լոզանքի փոշի և լոզարանի գնդակ, մաքրող միջոցներ) փնտրում են դիստրիբյուտորների ամբողջ աշխարհով: Ընկերությունը ցանկանում է իր արտադրանքը արտահանել արտասահմանյան շուկաներ և փնտրում է դիստրիբյուտորներ:

Ծածկագիր. BOPL20170802002

Լիտվայում գործող արտադրողը փնտրում է առևտրի միջնորդներ

Լիտվայում գործող պրոֆեսիոնալ կոսմետիկա արտադրողը (քսուքներ, մաքրող միջոցներ, շիճուկներ և այլն) աշխատում է կոսմետիկ և դեղագործական ոլորտներում փորձ ունեցող մասնագետների թիմի հետ: Այժմ նախատեսվում է նոր շուկաներ մուտք գործել և ընկերությունը փնտրում է գործընկերներ արտերկրում առևտրային գործակալության կամ դիստրիբյուտորական ծառայությունների մատուցման պայմանագրերի ներքո:

Ծածկագիր. BOLT20170726001

Դեղագործություն



Գործարար համագործակցության առաջարկներ

Միացյալ Թագավորությունում գործող ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ

Միացյալ Թագավորությունում գործող ընկերությունը, որը մասնագիտացած է դեղերի փաթեթավորման (պայուսակներ, շշեր, պիտակներ և այլն), ինչպես նաև բժշկական դիսպենսերների (օճառներ, ձեռքի գելեր և այլն) գործում, առաջարկում է իրենց արտադրանքը եվրոպական մատակարարներին: Ընկերությունը հիմնադրվել է որպես Մեծ Բրիտանիայի առողջապահության ոլորտի հիմնական մատակարար և այժմ ցանկանում է ընդլայնվել դեպի եվրոպական շուկաներ:

Ծածկագիր. BOUK20160921005

Արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ

Իսրայելում գործող ընկերությունը, որը մասնագիտացած է Եվրոպայում բժշկական գործունեությամբ, առաջարկում է յուրահատուկ արտադրանք՝ լիովին ավտոմատացված (ռոբոտային) համակարգ հեղուկ դեղերի պատրաստման համար հիվանդանոցային

դեղատներում կամ ավտոմատացված կենտրոններում: Ընկերությունը ցանկանում է գտնել դիստրիբյուտորներ, ովքեր ունեն արդեն իրենց պորտֆոլիոյում փորձ հիվանդանոցային դեղատների ապրանքների հետ, որոնք կարող են հասնել հիվանդանոցներ որպես վերջնական օգտագործողներ, ինչպես նաև ունեն բժշկական ոլորտում կապիտալ սարքավորման փորձառություն:

Ծածկագիր. BOIL20160719001

Գերմանական ընկերությունն առաջարկում է համագործակցել արտադրական և ենթակապալառուի պայմանագրերով

Գերմանական ընկերությունը մասնագիտացած է բժշկական և դեղագործական արդյունաբերության համար որակյալ OEM արտադրանքի և ծառայությունների մշակման ու արտադրության գործում, օրինակ, մետաղական կախազարդեր և ասեղներ, մետաղական չհրկիզվող ու համաձուլված պլաստմասսաներ: Նրանք ցանկանում են արտադրական և ենթակապալառուի պայմանագրերի կնքման միջոցով իրենց գիտելիքներն ու նորարարական տեխնոլոգիաները ներկայացնել դեղատների, ախտորոշման և բժշկական տեխնոլոգիաներին տիրապետող գործընկերներին, որոնք կարիք ունեն բժշկական պարագաների և բժշկական դիմորդների մշակման և պատրաստման համար:

Ծածկագիր. BODE20160616002

Գործարար համագործակցության հարցումներ

Լեհական ընկերությունը ցանկանում է համագործակցել դիստրիբյուտորական ծառայությունների մատուցման շրջանակներում

Լեհական դիստրիբյուտորը, որի անձնակազմը փորձառու է արյան փոխներարկման համար նախատեսված բժշկական սարքավորումների գործում, Լեհաստանում փնտրում է արտադրող կամ մատակարար, ովքեր կհամապատասխանեն շուկայի պահանջներին: Ընկերությունը ցանկանում է համագործակցել դիստրիբյուտորական ծառայություններ մատուցման շրջանակներում:

Ծածկագիր. BRPL20170601002



Գործարար համագործակցության առաջարկներ

Մլրվենական արտադրողը փնտրում է արտասահմանյան գործընկերներ

Մլրվենական պինդ փայտյա կահույքի, այգու կահույքի, փայտյա խաղալիքների և փայտյա այլ իրերի արտադրողը փնտրում է օտարերկրյա գործընկերներ, ովքեր ցանկանում են իրենց արտադրանքի մի մասը արտահանել: Ընկերությունը ցանկանում է հաստատել արտադրական կամ ենթակապալառուի պայմանագրեր՝ փայտե կահույքի և այլ փայտե իրերի արտադրության նպատակով:

Ծածկագիր. BOSI20170619003

Իսպանական արտադրողը փնտրում է առևտրային գործակալների և դիստրիբյուտորների

Ընկերությունը, որը գտնվում է Նավարայում (Հյուսիսային Իսպանիա), զբաղվում է լաբորատորիաների համար նախատեսված կահույքի և տեխնիկական սարքավորումների նախագծման, մշակման, արտադրության և հավաքագրման գործով: Ընկերությունը փնտրում է միջազգային դիստրիբյուտորներ կամ առևտրային գործակալներ՝ առևտրային գործակալության կամ տարածման ծառայությունների մատուցման պայմանագրերի շրջանակներում նոր շուկաներ մուտք գործելու համար:

Ծածկագիր. BOES20161026001

Լեհական գործակալությունը փնտրում է գործընկերներ

Լեհական հավաքագրման գործունեությամբ զբաղվող գործակալությունը, որը համագործակցում է խոշոր բիզնեսների հետ և զբաղվում է նրանց համար համապատասխան աշխատակիցների ընտրության հարցերով, ներկայումս փնտրում է նմանատիպ գործունեությամբ զբաղվող գործընկերոջ՝ բարձր որակավորում ունեցող անձնակազմ փնտրող գործատուի բարդ ծառայությունների մատուցման հարցում միասին համագործակցելու համար:

Ծածկագիր. BOPL20170829001

Գործարար համագործակցության հարցումներ

Հունգարական ընկերությունը փնտրում է մատակարարներ

Հունգարական էլեկտրոնային սարքերի վաճառքով զբաղվող ընկերությունը ցանկանում է կնքել երկարաժամկետ գնող-մատակարար համաձայնագիր վստահելի վաճառողների հետ անհատական ապրանքանիշի Եվրոպական սմարթֆոնների համար: Ընկերությունը ցանկանում է գտնել գործընկերներ Եվրոպական շուկայում և համագործակցել դիստրիբյուտորական ծառայությունների մատուցման շրջանակներում:

Ծածկագիր. BRHU20170314001

Իսպանական ընկերությունը ցանկանում է համագործակցել տարածման ծառայությունների մատուցման շրջանակներում

Իսպանական S2S ընկերությունը, որը մշակել է համընդհանուր կրթական հարթակ բիզնես ոլորտի մասնագետների համար, փնտրում է բիզնես ոլորտի բովանդակային նյութերի մատակարարողներ, (գրքեր, ամսագրեր, հոդվածներ և այլն) տարբեր լեզուներով՝ իր հարթակի միջոցով այն առևտրականացնելու նպատակով:


Ծածկագիր. BRES20170505001

Լեհական ընկերությունը փնտրում է կահույքի և կահավորման այլ պարագաներ արտադրողներ

Լեհական ընկերությունը, որը մասնագիտացած է կահույքի և կահավորման այլ պարագաների տարածման գործում, փնտրում է սեղան, աթոռներ և մասնավոր ու առևտրային օգտագործման համար այլ կահավորանք արտադրողներ: Ակնկալվում է համագործակցել տարածման ծառայությունների մատուցման շրջանակներում:

Ծածկագիր. BRPL20170314001

Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ



Տեխնոլոգիական համագործակցության առաջարկներ

Իտալական և ամերիկյան համալսարանների կողմից համատեղ մշակված ալցհեյմերի և նեյրոդեգեներատիվ հիվանդությունների բուժման տեխնոլոգիաների շրջանակում լիցենզային պայմանագրի կնքման առաջարկ

Իտալական և ամերիկյան համալսարանների հետազոտողների խումբը, որը իր գործունեությունը ծավալում է նեյրոդեգեներատիվ հիվանդությունների ոլորտում, ցանկանում է համագործակցել դեղագործական ընկերությունների հետ, ովքեր հետաքրքրված են ստանալ լիցենզիա առաջարկված տեխնոլոգիայի համար, որը իրենից ներկայացնում է ֆունկցիոնալա ցերային օքսիդ նանոպլաստիկայի պատրաստում՝ ուղղված գլխավորապես ալցհեյմեր հիվանդության, ինչպես նաև նեյրոդեգեներատիվ հիվանդությունների բուժմանը:

Ծածկագիր. TOIT20170821003

Նորարարական օպտիկական տարրեր՝ լուսավորման և շինարարական աշխատանքների նախագծման համար

Ինտերիերի դիզայնի արտադրանքի մասնագիտացված ֆրանսիական ՓՄՁ-ն մշակել է բարձրորակ օպտիկական տարրեր (սալիկներ), որը կարող է կախված ցանկությունից և վիզուալ էֆֆեկտների ուսումնասիրությունից օգտագործվել տարբեր եղանակներով: Այս տեխնոլոգիան իրենց արտադրանքին հարմարեցնելու համար ընկերությունը փնտրվում է նախագծված շինարարական արտադրանքներ, կահույք և լուսատուներ արտադրողներ տեխնոլոգիական համագործակցության համար:

Ծածկագիր. TOFR20160301003

Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ

ԴՆԹ-ի փոխարկման տեխնոլոգիան առանց բջիջների մեջ վիրուսային վեկտորների

Բելգիական ընկերությունը փնտրում է նոր մեթոդ / արտադրանք, (կենդանիների / մարդու) բջիջների մեջ պլազմիդ ԴՆԹ-ի փոխարկման համար, առանց վիրուսային վեկտորների կամ ապարատի օգտագործման: Մեթոդը պետք է աշխատի մկանային բջիջներում և այլ հյուսվածքներում: Ընկերությունը կարող է իրականացնել հետազոտություն և մշակում, եթե մշակումը ավարտին չի հասցվել: Տարբեր տեսակի պայմանագրեր կարող են կնքվել համագործակցության համար՝ տեխնիկական աջակցությամբ առևտրային պայմանագիր, լիցենզային կամ հետազոտական պայմանագրեր:

Ծածկագիր. TRBE20170814001

Որոնվում են ընկերություններ, որոնք ունեն փորձ ջերմապլաստիկ կոմպոզիտային նյութերի ոլորտում

Ավիաուղորտի , երկաթուղային և ավտոմոբիլային ոլորտում աշխատող իտալական ձեռնարկությունը մշակում է օդանավերի նոր հատակ՝ կազմված ջերմապլաստիկ կոմպոզիտային նյութից: Ընկերությունը փնտրում է գործընկեր կոմպոզիտային նյութերի արտադրության ոլորտից՝ նախատիպը պատրաստելու համար: Նրանք փնտրում են արտադրողներ՝ տեխնիկական համագործակցության նպատակով:

Ծածկագիր. TRIT20160623002

Եվրոպական նորություններ և միջոցառումներ

Ձեռնարկությունների եվրոպական ցանցի շրջանակներում կազակերպվում են բազմաթիվ միջոցառումներ, որոնք հնարավորություն են ընձեռում գործարարներին հանդիպելու հավանական գործընկերների հետ և ստանալու անհրաժեշտ տեղեկություններ՝ եվրոպական շուկա մուտք գործելու համար:

Ստորև ներկայացվում են 2017 թ. -ի հոկտեմբեր, նոյեմբեր ամիսների ընթացքում կազմակերպվող միջոցառումները:

Հոկտեմբեր

25/10/2017 – 27/10/2017	Manufacturing Solutions Expo (MSE 2017) (Մինգապուր) Այս միջոցառումը տարեկան ցուցահանդեսային հարթակ է արտադրանք և լուծումներ առաջարկողների համար, որոնք հնարավորություն են ստանում ցուցադրել նորարարական լուծումներ, ծախսարդյունավետ տեխնոլոգիաներ և արտադրանք՝ ուղղված բիզնեսի արտադրողականության և արդյունավետության բարելավմանը արտադրական ոլորտներում և դրանից դուրս: Միջոցառման ընթացքում կկազմակերպվեն B2B հանդիպումներ շահագրգիռ կողմերի միջև:
----------------------------	--

Նոյեմբեր

14/11/2017- 16/11/2017	Smart City Expo 2017 brokerage event (Բարցելոնա, Իսպանիա) Համագործակցության հաստատման այս միջոցառման նպատակն է աջակցել ՓՄՁ-ներին, սկսնակներին, ձեռնարկություններին, համալսարաններին, հետազոտական խմբերին, կորպորացիաներին, հաստատություններին և քաղաքներին արտադրանքի մշակման, արտադրության և լիցենզավորման պայմանագրերի, համատեղ ձեռնարկությունների կամ գործընկերության այլ համագործակցության տեսակների համար միջազգային գործընկերներ գտնելու հարցում: Օգտագործեք այս հնարավորությունը միջազգային կազմակերպությունների հետ համագործակցելու, կապեր հաստատելու և արդյունավետ հարաբերություններ հաստատելու ձեր ապագա նորարարական ծրագրերի իրականացման և ձեր բիզնես նպատակներին հասնելու համար:
---------------------------	--

Նոյեմբեր

23/11/2017	<p>International Industrial Bridge 2017 Brokerage Event (Լեհաստան)</p> <p>Այս միջոցառումը միավորում է լեհական և օտարերկրյա ընկերություններին և վերը նշված ոլորտների հետազոտողներին: Նախորդ կազմակերպված միջոցառումը հավաքեց 120 մասնակից 3 երկրներից, որոնք անցկացրեցին 138 հանդիպումներ: Մասնակցելով B2B հանդիպումներին, դուք կստանաք նոր բիզնես ուղիների հնարավորություն և կկարողանաք նախօրոք ընտրել հանդիպումներ՝ ստեղծելով առցանց պրոֆիլ գործընկեր գտնելու համար: Միջոցառումը բաց է ինչպես ՓՄՁ-ների, այնպես էլ տրանսպորտի, լոգիստիկայի և մետաղ / պողպատի ծովային արդյունաբերության ոլորտի խոշոր ընկերությունների համար:</p>
------------	--

Տեղական նորություններ և միջոցառումներ

05/09/2017	<p>Իրազեկման միջոցառում ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում</p> <p>2017 թ. -ի սեպտեմբերի 5-ին Գյումրու տեխնոլոգիական կենտրոնում կայացավ իրազեկման միջոցառում՝ ուղղված ՓՄՁ ոլորտի աջակցության ծրագրերին և գործիքներին:</p> <p>Միջոցառման մասնակիցներին ողջունեց Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի տեղեկատվական և խորհրդատվական աջակցության բաժնի ղեկավար Լիլիթ Հայրապետյանը: Վերջինս, հանդիսանալով «ԷՐԱՍՍՈՒՍ երիտասարդ ձեռնարկատերերի համար» ծրագրի ղեկավար, նույն ծրագրի փորձագետ Գոհար Գալյանի հետ համատեղ ներկայացրեց «ԷՐԱՍՍՈՒՍ երիտասարդ ձեռնարկատերերի համար» ծրագիրը: Նրանք խոսեցին ծրագրի առավելությունների, թիրախ հանդիսացող ՓՄՁ-ների և մասնակցության ընթացակարգի վերաբերյալ:</p> <p>Տեղեկատվական միջոցառման ընթացքում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի տեղեկատվական և խորհրդատվական աջակցության բաժնի և «Ձեռնարկությունների եվրոպական ցանց Հայաստան» ծրագրի փորձագետ Մերի Կարապետյանը ներկայացրեց Ձեռնարկությունների եվրոպական ցանցի (ՁԵՑ) գործիքները: Նա գործարարներին ներկայացրեց ՁԵՑ կողմից տրամադրվող ծառայությունները, ինչպես նաև տեղեկացրեց ՁԵՑ գործիքների այլ հնարավորությունների մասին: Միջոցառման ավարտին հարցուպատասխանի միջոցով ներկաները ստացան վերը նշված ծրագրերին առնչվող իրենց հուզող հարցերի պատասխանները:</p>
------------	---

08/06/2017	<p>Կայացավ «Եվրոպան Հայաստանում» ցուցահանդեսը</p> <p>2017թ. -ի սեպտեմբերի 15-17-ը Երևան Էքսպո կենտրոնում կայացավ</p>
------------	---

	<p>«Եվրոպան Հայաստանում» ցուցահանդեսը: Ցուցահանդեսը կազմակերպվել էր Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության, Եվրոպական բիզնես ասոցիացիայի կողմից՝ Հայաստանում գործող ԵՄ առևտրաարդյունաբերական պալատների հետ համատեղ: Ցուցահանդեսի ընթացքում եվրոպական մի շարք ընկերություններ ներկայացրեցին իրենց արտադրանքն ու ծառայությունները: Ցուցահանդեսին հրավիրված էին գործարարներ Եվրոպական միության երկրներից, Իրանից, ինչպես նաև՝ տեղական գործարարներ, որոնք հնարավորություն ունեցան հետագա համագործակցության հաստատման համար պայմանավորվածություններ ձևափոխել գործարար համագործակցության հաստատման հանդիպումների միջոցով: Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը «Ձեռնարկությունների եվրոպական ցանց Հայաստան» ծրագրի շրջանակներում կազմակերպել էր վերը նշված գործարար համագործակցության հաստատման հանդիպումները: Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը ցուցահանդեսին ներկայացված էր ԵՄ աջակցությամբ իրականացվող 3 ծրագրի ներկայացնող տաղավարով՝ «Ձեռնարկությունների եվրոպական ցանց Հայաստան», «Էրասմուս Երիտասարդ ձեռնարկատերերի համար», «Տարածաշրջանային ՓՄՁ-ների մրցունակության խթանումը»:</p> <p>Ցուցահանդեսին ՁԵՑ Հայաստանի հրավերով մասնակցում էր նաև ՁԵՑ Հունաստանի գործընկեր PRAXI Network կազմակերպության տեխնոլոգիական փոխանցման խորհրդատու՝ պրն. Պանայոտիս Իգնատիադիսը:</p>
--	---

Վերոհիշյալ միջոցառումների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար խնդրում ենք դիմել ՁԵՑ Հայաստան:

Նշում: *Եթե Դուք փնտրում եք գործընկեր արտասահմանում կամ նոր շուկա՝ և ցանկություն ունեք ներգրավվել ցանցի տվյալների բազայում, խնդրում ենք դիմել ՁԵՑ Հայաստան՝ համագործակցության հայտաձևեր և այլ համապատասխան տեղեկատվություն ստանալու համար:*

Հարգելի գործարար,

Գրանցվեք հետևյալ հղմամբ՝

<http://een.ec.europa.eu/tools/services/ExpressionOfInterest/Customer/Create?shid=32db25cb-726f-43b0-8b5f-7742d0935799> և ստացեք անվճար

հաղորդագրություններ Ձեր էլեկտրոնային փոստին նոր գրանցված բիզնես ստաջարկների, միջազգային միջոցառումների վերաբերյալ:

Մատուցվող բոլոր ծառայություններն ու տեղեկատվությունն անվճար են: